



2006 – 2010 Թ.Թ. ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆ
ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱԶՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ

/ ընդունվել է 2005թ. լրամշակվել է 2007թ. օգոստոսին/

1. ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ ԵՎ ԱՆՑԱԾ ՈՒՂԻՆ

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի (ՀՔԱ) Վանաձորի գրասենյակն ոչ քաղաքական, ոչ կրոնական, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող հասարակական կազմակերպություն է, որը միավորում է ժողովրդավարության, հանդուրժողության, բազմակարծության և մարդու իրավունքների գերակայության սկզբունքներն արժևորող անհատների:

1992թ. Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեան Հայաստանում իր գործունեությունն ընդլայնելու ընթացքում, ստեղծեց Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Հայաստանի կոմիտե: Այդ աշխատանքներին Վանաձորում ներգրավվել և մեծապես աջակցում էր ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ներկայիս ղեկավար Արթուր Սաքունցը:

1998թ-ի մարտի 21-ին ՀՔԱ Հայաստանի կոմիտեն Վանաձորում հիմնեց տեղական գրասենյակ, որն իրավաբանական անձի կարգավիճակ չուներ: Կազմակերպության առաջին մեկուկես տարվա գործունեությունն ապահովվել է ՀՔԱ Հայաստանի կոմիտեի կողմից իրականացված «ՀՔԱ ցանցի ստեղծումը Հայաստանի Հանրապետության շրջաններում» ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորվում էր TESIS-ի ժողովրդավարական ծրագրերի կողմից: Գրասենյակի հիմնադրման առաջին իսկ օրվանից, որը գործում էր 2 սենյականոց փայտաշեն տնակում, մեծ է եղել կամավորների ներդրումը իրականացվող աշխատանքներին:

Հեռանկարում ունենալով քաղաքացիական հասարակության ձևավորումը՝ ՀՔԱ Վանաձորի գրասենյակը սկզբնական շրջանում չուներ հստակ ռազմավարություն:

1998թ-ին ՀՔԱ Վանաձորի գրասենյակը Գուդաուրիում Լեհաստանի Հելսինկյան ֆոնդի կողմից կազմակերպված սեմինարից հետո որպես ռազմավարական գործունեության հիմնական ուղղություն ընտրեց մարդու իրավունքների պաշտպանությունը: Գրասենյակի կողմից կազմակերպված առաջին միջոցառումը՝ «Տեղեկատվության դերը քաղաքացիական



հասարակության ձևավորման մեջ» թեմայով՝ 1998 թ-ի հունիսի 21-ին էր: Խոսքի ազատությունը, տեղեկատվության տարածումը, ՁԼՍ-ների և լրագրողների շահերի պաշտպանությունը մշտապես եղել է ՀԲԱ Վանաձորի գրասենյակի գործունեության առանցքում, որը հետագայում իր տրամաբանական ձևակերպումն է ստացել 2004թ-ին Վանաձորի մամուլի ակումբի հիմնադրմամբ:

ՀԲԱ Հայաստանի կոմիտեի ծրագրերի իրականացման շրջանակներում կազմակերպությունը ուսումնասիրել է երիտասարդների և կանանց հիմնախնդիրները, հասարակական գործընթացներում նրանց ներգրավմանը խոչընդոտող գործոնները: Այս գործողությունների շրջանակում առաջին փորձերն են կատարվել հասարակական կարծիքի ուսումնասիրման մեթոդների կիրառման, կլոր սեղանների կազմակերպման, այլ ՀԿ-ների հետ համագործակցության ձևավորման բնագավառներում:

Ելնելով մարդու իրավունքների պաշտպանության ուղղությամբ գործողությունների կատարման անհրաժեշտությունից՝ արդյունավետ համագործակցություն է ձևավորվել այլ իրավապաշտպան կազմակերպությունների՝ Հայաստանի Հելսինկյան կոմիտեի, Հելսինկյան ընկերակցության, Քաղաքացիական Հասարակության Ինստիտուտի, Մարդու իրավունքների պաշտպանության Լեհական Հելսինկյան հիմնադրամի, ինչպես նաև Միջազգային Ներում և Հյուսան Ռայթս Վոթչ միջազգային իրավապաշտպան կազմակերպությունների հետ:

Մինչ ինքնուրույն իրավաբանական անձի կարգավիճակ ձեռք բերելը կազմակերպությունը կուտակել էր լուրջ մարդկային, մասնագիտական ռեսուրսներ, որոնց հետագա զարգացումը պահանջում էր ինչպես լրացուցիչ ֆինանսական, մարդկային ռեսուրսների ներգրավում, այնպես էլ համագործակցության նոր ուղղությունների ձևավորում:

1999թ-ի հունվարի 31-ին ՀԲԱ քաղաքական քարտուղար **Միենթ** Յան Ֆաբերը, ՀԲԱ համանախագահ Մերի Քյալդերը, ՀԲԱ Ադրբեջանի կոմիտեի նախագահ Արզու Աբդուլաևան, ՀԲԱ Հայաստանի և Վրաստանի կոմիտեների ներկայացուցիչներն այցելեցին ՀԲԱ Վանաձորի գրասենյակ, որով կազմակերպությունը փաստացի ճանաչվեց Հարավային Կովկասում ՀԲԱ ցանցի անդամ:

Այցի արդյունքում ձևավորվեց անմիջական ռազմավարական գործընկերություն Միջեկեղեցական Խաղաղության խորհրդի /IKV, Նիդեռլանդներ/ հետ: 2000 թ-ի սեպտեմբերին Միջեկեղեցական Խաղաղության խորհրդի ֆինանսավորմամբ ՀԲԱ Վանաձորի գրասենյակն իրականացրեց առաջին ինքնուրույն ծրագիրը, որը վերաբերում էր Եվրոպայի խորհրդին անդամակցելու հետ կապված Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնելիք պարտավորությունների ծանուցմանը Վանաձորում:

2000թ. օգոստոսին ՀԲԱ Վանաձորի գրասենյակ այցելեցին Միջեկեղեցական Խաղաղության խորհրդի /Նիդեռլանդներ/ գործադիր տնօրեն Վիլկո դե Յոնգեն և ՀԲԱ Հարավային Կովկասի գրասենյակի պատասխանատու



Մարտեն վան Հարթենը: Հանդիպման արդյունքում մշակվեց ՀՔԱ Վանաձորի գրասենյակի և Միջեկեղեցական խաղաղության խորհրդի համատեղ ծրագիր՝ Ղարաբաղյան հակամարտությունում անհայտ կորածների իրավունքների և նրանց ընտանիքների խնդիրների լուծման վերաբերյալ:

2002-2004թթ-ին ծրագիրն իրականացվեց ՀՔԱ Ադրբեջանի կոմիտեի Գյանջայի գրասենյակի հետ, իսկ 2004-2006թթ-ի ընթացքում ՀՔԱ Հարավային Կովկասի ցանցի անդամ կազմակերպությունների հետ միասին:

2001թ-ի ապրիլի 9-ին ՀՀ արդարադատության նախարարության կողմից ՀՔԱ Վանաձորի գրասենյակը գրանցվեց որպես իրավաբանական անձ:

2002թ-ի մայիսի 1-ից ՀՔԱ Վանաձորի գրասենյակը ժամանակավոր երկսենյականոց փայտաշեն տնակից տեղափոխվեց նոր բարեկարգված տարածք:

2005թ-ին ՀՀ «Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի փոփոխություններից համապատասխան կազմակերպությունը ՀՀ արդարադատության նախարարության կողմից վերագրանցվեց՝ համապատասխանեցնելով իր կանոնադրությունն օրենքի պահանջներին:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակն իր առաքելությանը հասնելու նպատակով գործունեություն է իրականացնում երեք հիմնական բնագավառներում.

- իրավապաշտպանություն
- քաղաքացիական նախաձեռնությունների խթանում
- խաղաղասիրություն

1.2 ՀՔԱ ՎԱՆԱԶՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆՑՐԱԾ ԾՐԱԳՐԵՐԸ

Իրավաբանական անձի կարգավիճակ ձեռք բերելուց հետո մինչև 2007թ. օգոստոսը կազմակերպությունն իրականացրել է բազմաթիվ ծրագրեր՝ համայնքային, մարզային, ազգային և տարածաշրջանային մակարդակներում՝ մարդու իրավունքների և շահերի պաշտպանության, խաղաղասիրության, քաղաքացիական նախաձեռնությունների խթանման և բնապահպանության բնագավառներում: Գործունեության շրջանակները շնորհիվ նոր գործընկերների ընդգրկման դարձել են ավելի արդյունավետ, և գրասենյակը համարվում է որպես իրավապաշտպանական և խաղաղասիրական ճանաչված կազմակերպություն:

Այդ ընթացքում մասնավորապես իրականացվել են հետևյալ ծրագրերը՝

Հ/Հ Ը/Կ	Ծրագրի անվանումը	Նպատակը	Դրա- մա	Դրամա- շնորհի	Դրամաշնո րհը տվող	Այլ ՀԿ- երի
------------	---------------------	---------	------------	------------------	----------------------	----------------



ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ԶԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱԶՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ

ՀՀ, 2001, ք.Վանաձոր, Տիգրան Մեծի 59: Դեռ.՝ (+374 322) 4 22 68, Էլ. huugt`hcav@hcav.am

			շնորհի չափը	ստացման տարեթիվը	կազմակերպության անվանումը	ընդգրկվածությունը
1.	«ՀԶԱ Վանաձորի գրասենյակի գործունեության աջակցություն»	1.«Քաղաքացիական հասարակություն» խորագրով թվով երեք տեղեկագրերի տպագրում անգլերեն, հայերեն և ռուսերեն լեզուներով 2. «ՀՀ պարտավորությունները Եվրոպայի խորհրդին անդամակցելիս» թեմայով երկու քննարկումների կազմակերպում	2500 ԱՄՆ դոլար	2000թ. նոյեմբեր	NOVIB, Նիդեռլանդներ	ոչ
2.	«Բնակարանների գնման վկայագրեր»	Աղետից տուժած Վանաձորի քաղաքացիներին աջակցություն՝ բնակարանի գնման վկայագրերի ձեռք բերման համար անհրաժեշտ փաստաթղթերի ձևակերպման գործում	6000 ԱՄՆ դոլար	2001թ. սեպտեմբեր	Ուրբան ինստիտուտ	ոչ
3.	3.«Մարդու իրավունքների և քաղաքացիական հասարակության հիմնադրույթները» թեմայով սեմինարների կազմակերպում Վանաձորի	1.Մարդու իրավունքների, քաղաքացիական հասարակության վերաբերյալ գիտելիքների ուսուցում ուսանողներին 2. Մարդու իրավունքների պաշտպանության ազգային և եվրոպական մեխանիզմների ուսուցանում 3.Ոչկառավարական կազմակերպ-	5300 ԱՄՆ դոլար	2001թ. սեպտեմբեր	Համաշխարհային ուսուցում	ոչ



	ուսանողների համար	պությունները որպես քաղաքացիական ակտիվության դրսևորման մեխանիզմ				
4.	«Խաղաղության կառուցում Զարավային Կովկասում»	1. Զարավային Կովկասում ԶԲԱ գրասենյակների հզորացում և զարգացում 2. Ղարաբաղյան պատերազմում անհայտ զինառայողների և նրանց ընտանիքների խնդիրների ուսումնասիրություն	34580 Եվրո	2001թ. նոյեմբեր	Միջեկեղեցական Խաղաղության Խորհուրդ, Նիդերլանդներ	այո
5.	«Վանաձորի քաղաքացիների և ինքնակառավարման մարմինների համագործակցության մեխանիզմները»	1. Վանաձորի բնակիչների իրազեկվածության մակարդակի բարձրացում ինքնակառավարման մարմինների դերի, նշանակության և գործառույթների վերաբերյալ ուղիղ հեռուստաեթերների կազմակերպման միջոցով 2. Քաղաքացիների և ինքնակառավարման մարմինների միջև համագործակցության մեխանիզմների մշակում և համապատասխան գրքույկների տպագրում	13600 ԱՄՆ դոլար	2002թ. ապրիլ	«Եվրասիա» հիմնադրամ	ոչ
6.	«Համագործակցություն Դեբեդ գետի պահպանության նպատակով»	Աջակցել Դեբեդ գետի գետավազանի էկոլոգիական հիմնախնդիրների լուծմանը	2500 ԱՄՆ դոլար	2003 դեկտեմբեր 2004 հունվար		DAI



ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ԶԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱԶՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ

ՀՀ, 2001, ք.Վանաձոր, Տիգրան Մեծի 59: Դեռ.՝ (+374 322) 4 22 68, Էլ. huugt`hcav@hcav.am

7.	«Քաղաքացիական նախաձեռնումները ությունների խթանումը կոռուպցիայի դեմ պայքարի նպատակով Լոռու մարզի Վանաձոր, Ալավերդի և Ստեփանավան քաղաքներում:	Կոռուպցիայի վերաբերյալ հասարակական իրազեկման մակարդակի բարձրացումը՝ կոռուպցիան կանխարգելելու նպատակով	25000 USD	2003 դեկտեմբեր-2004 մայիս	USAID, World Learning	այո
8.	«Կարմիր կանուրջ» տարածաշրջանային ծրագիր	Հարավային Կովկասում տարածաշրջանային համագործակցության ձևավորում	20200 EURO	2003-2004	ICCO, IKV /The Netherlands/	այո
9.	«Դեղին կակաչներ»	Ղարաբաղյան պատերազմում անհայտ կորածների և նրանց ընտանիքների շահերի պաշտպանություն	5200 EURO	2004 October	ICCO, IKV /The Netherlands/	այո
10.	Տեղեկատվության ազատության մոնիտորինգ	Տեղեկատվության ազատության իրավիճակի բարելավում	640 USD	March-October 2004	OSCE Yerevan office	այո
11.	Կարողությունների զարգացման ծրագիր	ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կարողությունների և ինստիտուցիոնալ զարգացում	44250 EURO	2003-2006	ICCO, IKV /The Netherlands/	այո
12.	Վանաձորի մամուլի ակումբի ստեղծում	Հայաստանի Հյուսիսային շրջանների ազատ լրատվամիջոցների	7031 USD	2004 October 2005 Feb-	“Eurasia” Foundation	այո



ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ԶԱՂԱԲԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱԶՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ

ՀՀ, 2001, ք.Վանաձոր, Տիգրան Մեծի 59: Դեռ.՝ (+374 322) 4 22 68, Էլ. huugt`hcav@hcav.am

		զարգացման ռեսուրսների ձևավորում		ruary		
13.	“New Tactics in Human Rights” սիպոզիումի նյութերի թարգմանություն և կլոր սեղանի կազմակերպում	Մարդու իրավունքների նոր մարտավարությունների տարածումը	250 USD	February – April, 2005	New Tactics in Hman Rights	ոչ
14.	«Դեղին կակաչներ» տարածաշրջանային ծրագիր	Կոնֆլիկտների պատճառով անհայտ կորածների և նրանց ընտանիքների շահերի պաշտպանություն	21660 EURO	2005-2006	ICCO, IKV /The Netherlands/	այո
15.	«Փոխվստահության կառուցում»	Կոնֆլիկտի մեջ ներգրավված հասարակությունների միջև փոխվստահության ձևավորում	24000 EURO	2005-2006	ICCO, IKV /The Netherlands/	այո
16.	«Խաչվող սահմաններ»	Սահմանամերձ բնակավայրերի համագործակցության զարգացում	12700 EURO	2005-2006	ICCO, IKV /The Netherlands/	այո
17.	Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների և ՀՀ Սահմանադրության որակի բարձրացում	Ընտրողների և ընտրվողների իրավունքների պաշտպանություն, ընտրակեղծիքների կանխարգելում	27633 USD	2005 September - 2006 February	Բաց Հասարակության ինստիտուտ	այո
18.	«Մեկուսացված քաղաքակր	Վանաձորի տնակային ավանի բնակիչների շահերի	10000 USD	March-October 2006	Բաց Հասարակության	ոչ



ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱԶՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ

ՀՀ, 2001, ք.Վանաձոր, Տիգրան Մեծի 59: Դեռ.՝ (+374 322) 4 22 68, Էլ. huugt' hcav@hcav.am

	թուրքում»	պաշտպանություն			Ինստիտուտ, Համաշխարհային Բանկ	
19.	«Հայաստանում կրոնի ազատության վերաբերյալ հասարակության հրազեկում»	Կրոնական կազմակերպությունների նկատմամբ հասարակության հանդուրժողության մթնոլորտի ձևավորում և կրոնական կազմակերպությունների ներագրավում հասարակական գործընթացներում	7990 USD	2005-2006	Embassy of the Kingdom of the Netherlands	ոչ
20.	Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի կողմից մարդու իրավունքների պաշտպանության գործում կիրառվող մեթոդները, տեխնոլոգիաները, միջոցները և եղանակները: Մարդու իրավունքների վիճակը Լոռու մարզում	Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի կողմից պաշտպանության գործում կիրառվող մեթոդները, տեխնոլոգիաները, միջոցները և եղանակները: Մարդու իրավունքների վիճակը Լոռու մարզում		2006	Caunterpart International	ոչ



	2004-2005թթ					
21.	Նախկին ռազմագերիների և նրանց ընտանիքների շահերի և իրավունքների պաշտպանություն, հասարակության մեջ ինտեգրում	Նախկին ռազմագերիների և նրանց ընտանիքների շահերի և իրավունքների պաշտպանություն, հասարակության մեջ ինտեգրում	69700 0 AMD	May-September 2007	Caunter-part International	ոչ
22.	ՀՔԱ Վանաձորի գրասենյակի իրավապաշտպանական կարողությունների զարգացում	Մարդու իրավունքների պաշտպանության արագ արձագանքման մեխանիզմների ձևավորում	36000 USD	2006-2009	Բաց Հասարակության Ինստիտուտի օժանդակության հիմնադրամ, Նիդերլանդների թագավորության դեսպանատուն	ոչ

2. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի առաքելությունն է տեղական, տարածաշրջանային և հանրապետական մակարդակներում քաղաքացիական նախաձեռնությունների աջակցությունն ու խթանումը, խաղաղասիրական ու իրավապաշտպանական գործընթացների հզորացումը:

3. ՏԵՍԼԱԿԱՆԸ



ՀՔԱ Վանաձորի գրասենյակի տեսչականն է՝
ձևավորել հասարակություն, որտեղ գերակա արժեքներ են մարդու
արժանապատվությունը, ժողովրդավարությունը և խաղաղությունը:

4. ԱՌԱՋՆՈՐԴՈՂ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Կազմակերպության գործունեության առաջնորդող սկզբունքներն են՝

1. քաղաքացիական հասարակության հիմքը յուրաքանչյուր անձի արժանապատվության պաշտպանությունն է:
2. Ցանկացած խախտված իրավունք ենթակա է պաշտպանության:
3. Կոնֆլիկտի խաղաղ կարգավորումն այլընտրանք չունի:
4. Կոնֆլիկտից տուժածների պաշտպանությունը պայմանավորված չէ նրանց ազգային, ռասսայական, կրոնական, քաղաքացիության և սեռական պատկանելիությամբ:
5. Յուրաքանչյուր անհատի իրավունք խախտված է այնքան ժամանակ, քանի դեռ խախտված է թեկուզ մեկի իրավունք:
6. Քաղաքացիական հասարակությունը և ժողովրդավարությունը սկսվում են քո համայնքից:
7. Սեփական օրինակով ձևավորված նախադեպը քաղաքացիական նախաձեռնության աջակցության լավագույն խթանն է:
8. Իրականացնելով շահերի պաշտպանություն՝ չհետապնդել քաղաքական նպատակներ:
9. Մասնակցությունն ապահովում է ժողովրդավարություն:
10. Չվախենալ լինել փոքրամասնություն:

5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ՝ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

	Ուժեղ	Թույլ
Դեկավարում		
Կազմակերպության կառուցվածքը	1. Հկ-ն ունի դասական կառուցվածք. <ul style="list-style-type: none"> • ընդհանուր ժողով • խորհուրդ • նախագահ • աշխատակազմ 	
Մենեջմենթի կարողություններն ու հետաքրքրությունները	1. Սեկտորների՝ բաժինների, գոյություն 2. Բաժինների	1. Պատասխանատուների մոտ կառավարչական հմտությունները թույլ են



	պատասխանատուների առկայություն, որոնք տվյալ ոլորտում մասնագիտական առումով հնուտ են 3. Աշխատակիցների պաշտոնների նկարագրերի առկայություն	զարգացած 2. Պաշտոնների նկարագրերը ներկայիս պայմաններին համապատասխանեցնելու, վերանայելու կարիք կա
Ստանդարտները, ընթացակարգերն ու կանոնադրությունը	1. Աշխատանքի կազմակերպման կարգի առկայություն	1. Խրախուսման և պատժի համակարգի թույլ զարգացվածություն 2. Աշխատանքների կազմակերպման կարգի ընկալման տարբերություն կա ղեկավար մարմինների անդամների և աշխատակիցների կողմից
Վերահսկման համակարգը	1. Սահմանված են վերահսկողության մեխանիզմները 2. Սահմանված է վերահսկման հիմնական պատասխանատուն և ընկալվում է աշխատակազմի կողմից որպես այդպիսին:	1. Պատիժների և խրախուսման համակարգը միշտ չէ, որ կիրառվում է 2. Աշխատակազմի կողմից վերահսկման համակարգի թույլ գիտակցում
Պլանավորման համակարգը	1. Ռազմավարական պլանի առկայություն:	1. Միշտ չէ, որ կազմվում են կարճաժամկետ պլաններ
Ինֆորմացիոն կառավարման համակարգ	1. Ստեղծված է ամբողջ աշխատակազմին հասանելի ինֆորմացիոն կառավարման համակարգ 2. Առկա է կազմակերպության գործունեության վերաբերյալ ինտերնետային էջ	1. Նախնական ինֆորմացիայի վերլուծության պարտադիր համակարգ չի կիրառվում
Մարդկային ռեսուրսներ		
Աշխատողների թիվը	1. Հիմնական աշխատանքների ծավալին համապատասխան թվով աշխատակիցների առկայություն	1. Որոշակի աշխատանքների դեպքում համապատասխան փորձ ունեցող անձանց սակավություն
Մասնագիտական հմտություններ և փորձ	1. ՀԿ-ն ունի փորձառու նախագահ 2. Փորձառու և հնուտ	1. Փոխարինողների բացակայություն



	<p>աշխատակիցների առկայություն</p> <p>3. Աշխատակազմն ունի ֆինանսական ռեսուրսների հայթայթման և ծրագրերի կազմման հմտություն</p> <p>4. Սկսնակ աշխատակիցների համար կարողությունների շարունակական զարգացման հնարավորություն</p>	
Վերաբերմունք	1. Մոտիվացված աշխատակազմի առկայություն	1. Միջանձնային աշխատանքային հարաբերություններում առաջացող խնդիրների լուծման մեխանիզմի ձևավորման անհրաժեշտություն և պարբերաբար վերանայում
Նյութատեխնիկական ռեսուրսներ		
Նյութական միջոցներ	<p>1. Գործունեության համար անհրաժեշտ տարածքի առկայություն</p> <p>2. Համապատասխան գույքի առկայություն</p> <p>3. Համապատասխան գրականության և նյութերի առկայություն</p> <p>4. Ֆոտո և տեսախցիկների առկայություն</p>	<p>1. Ներկայիս աշխատանքների ծավալի և աշխատակիցների թվի համեմատ փոքր տարածք:</p> <p>2. Որոշակի գույքի նորացման անհրաժեշտություն</p>
Ինֆորմացիոն միջոցներ	<p>1. Հեռախոսի առկայություն</p> <p>2. էլեկտրոնային կապի առկայություն</p>	
Համակարգչային սարքավորումներ	<p>1. Համակարգչային ներքին ցանցի և համակարգիչների առկայություն</p> <p>2. Համակարգչային մոնտաժի սարքավորումների առկայություն</p> <p>3. Պատճենահանման և տպող սարքերի, սկաների առկայություն</p>	1. Համակարգիչների թիվը չի բավարարում աշխատանքները միաժամանակ ողջ ծավալով իրականացնելու համար
Տրանսպորտային միջոցներ	1. Սեփական միկրոավտոբուսի	1. Միկրոավտոբուսի ֆիզիկական



	առկայություն	մաշվածություն
Ֆինանսական ռեսուրսներ		
Դրամահավաքի կարողությունը	1. Կա դրամահավաքի հնտություններին տիրապետող աշխատակազմ	1. Բացակայում է դրամահավաքի պլանը
Ֆինանսական կառավարման համակարգը	1. Առկա է տարբեր դոնորների պահանջներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման հնարավորություն	
Ֆինանսավորման աղբյուրները	1. Ֆինանսական հիմնական հոսքը ապահովվում է միջազգային դոնորների կողմից 2. Վարվում է ՀՀ օրենսդրությանը համապատասխան հաշվապահություն	1. Կատարվող աշխատանքները և ֆինանսները հաճախ չեն համապատասխանում 2. Միջազգային դոնորների ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերի կարճ ժամկետներ
Ծառայությունների մատուցում		
Սեկտորային փորձաքննություն	1. Ունի երեք ծրագրային բաժին. <ul style="list-style-type: none"> • իրավախորհրդատվական • խաղաղասիրական և տարածաշրջանային համագործակցության ծրագրերի • քաղաքացիական նախաձեռնությունների աջակցության ոլորտներում աշխատանքներ իրականացնելու համար	
Ճանաչում համայնքի կողմից	1. Լավ համբավ տվյալ ոլորտի տեղական և միջազգային կազմակերպությունների, կառույցների շրջանում	1. Հասարակության կողմից կազմակերպության գործունեության վերաբերյալ ոչ ամբողջական պատկերացում
Ազդեցության գնահատում	1. Աշխատակազմն ունի բավարար գիտելիքներ ազդեցության գնահատում	1. Ազդեցության գնահատում չի կատարվել



	կատարելու համար: 2. Աշխատակազմի կողմից մշակվել է ազդեցության գնահատման թերթիկը	
Շահերի պաշտպանություն		
Շահերի պաշտպանության կարևորումը և փորձը	1. Աշխատակազմը կարևորում է շահերի պաշտպանությունը: 2. Ունի շահերի պաշտպանության փորձ՝ ստեղծելով նախադեպեր	1. Շահերի պաշտպանության ոլորտում շարունակականությունը չի ապահովվել

6. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

6.1 ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԸ

Երևույթը	Հնարավորությունը	Սպառնալիքը
Քաղաքական մակարդակ		
Քաղաքական կոռուպցիայի միջոցով ձևավորված օրենսդիր, գործադիր և դատական իշխանության առկայություն		Բացասական ազդեցություն է ունենում մարդու իրավունքների վիճակի վրա
Օրենսդիր և դատական իշխանության կախվածությունը գործադիր իշխանությունից		Խոչընդոտ է հանդիսանում արդար դատաքննության իրավունքի իրականացման համար
Իշխանության գործունեության անկանխատեսելիությունը, նրանց գործունեության կամայականությունը		Հասարակության մեջ կարծիք է ձևավորվում, որ մարդու խախտված իրավունքների վերականգնումն անհնար է: Քաղաքացիների կողմից նախաձեռնողականություն չի ցուցաբերվում



<p>Կառավարության առանձին կառույցների և ԱԺ որոշ պատգամավորների հետ հարաբերությունները</p>	<p>Համատեղ աշխատանքի և համագործակցության հնարավորությունը</p>	
<p>Իրավունքի գերակայության սկզբունքի բացակայությունը, օրենքների չկիրառումը կամ դրանց ոչ ճիշտ կիրառումը</p>		<p>Քաղաքացիների շրջանում վախի և անպաշտպանվածության մթնոլորտ է ձևավորվում : Նվազում է քաղաքացիների մասնակցությունն իրենց իրավունքների պաշտպանության գործում Օրինակ՝ կազմակերպության կողմից անցկացվող հրապարակային միջոցառումներում քաղաքացիների մասնակցությունը շատ փոքր է: <i>Մասնավորապես՝ 2003թ-ի մարտ-մայիս ամիսներին գրասենյակի նկատմամբ իրականացվել են քրեական գործողություններ /մարտի 8-ին ջարդվել էր գրասենյակի դռան ապակին, մարտի 14-ին հրդեհվել է գրասենյակը, մարտի 15-25-ը վարչական կալանքի ենթարկվեց կազմակերպության ղեկավարը, մայիսի 4-ին վնասվել էր գրասենյակի ճաղավանդակը/:</i> Այս ոտնձգություններն իրականացվել են 2003թ-ի</p>



		<p>նախագահական ու պառլամենտական ընտրությունների ժամանակ, երբ կազմակերպությունը զբաղվում էր ընտրությունների դիտորդական առաքելությամբ, միաժամանակ կազմակերպությունը պաշտպանում էր երիտասարդ վանաձորցու իրավունքները, որին խոշտանգել էին ոստիկանությունում:</p>
<p>Տարածաշրջանի անկայուն իրավիճակը՝ մասնավորապես ղարաբաղյան կոնֆլիկտի առկայությունը</p>		<p>Նվազեցնում է մարդու իրավունքների պաշտպանության տարածաշրջանային մեխանիզմների ձևավորման և կիրառման հանարավորությունը: Ռազմականացման բարձր մակարդակը և զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության բացակայությունը հանգեցնում է քաղաքական, տնտեսական և հասարակական գործընթացների վրանրանց մեծ ազդեցությամբ, որը բացասաբար է անդրադառնում ժողովրդավարական բարեփոխումների և իրավական մշակույթի ձևավորման վրա</p>



Քաղաքական կուսակցությունների չկայացվածությունը և քաղաքական համակարգի անկայունությունը		Շահերի պաշտպանության գործընթացում կազմակերպության գործունեության ազդեցության նվազեցում
Հասարակական մակարդակ		
ՀԿ սեկտորում մեծ թիվ են կազմում կառավարամետ /պրոկառավարական և քաղաքականացված ՀԿ-ները/		Հասարակության կողմից կազմակերպության գործունեության նկատմամբ վստահության նվազեցումը: Որոշ դեպքերում համագործակից ՀԿ-ի վարքագծի անկանխատեսելիությունը
ԶԼՍ-ների կախվածությունը գործող իշխանությունից		Տեղեկատվության տարածումը սահմանափակվում է, կազմակերպության գործունեությունը կամ չի մեկնաբանվում կամ մեկնաբանվում է աղճատված
Տեղական, հանրապետական և միջազգային կազմակերպությունների հետ որոշակի համագործակցություն	ՀԿ-ի ճանաչողության աճը	
Շահառուների պատրաստակամությունը մասնակցելու և աջակցելու կազմակերպության գործունեության իրականացմանը	Քաղաքացիական մասնակցության հնարավորություն: Որոշակի խնդիրների լուծման արդյունավետության բարձրացում	
Քաղաքացիական նտածողության բացակայությունը		Հասարակական-քաղաքական գործընթացներում քաղաքացիների



		ընդգրկվածությունը սահմանափակ է
Տեղական ՀԿ-ների կողմից իշխանությունների գործողությունների ոչ համարժեք արձագանքը		Մեկուսացնում է կազմակերպությունը, նվազեցնում գործունեության արդյունավետությունը
ՀԿ սեկտորի համապատասխան կարողությունների բացակայությունը		Գործունեության արդյունավետությունը նվազում է
Ֆինանսական մակարդակ		
Միջազգային դոնորների թվի կրճատումը		Նվազում է դոնորների կողմից կազմակերպության գործունեության ֆինանսական աջակցությունը
Բիզնեսի կախվածությունը գործադիր իշխանությունից		Սահմանափակում է համագործակցության հնարավորությունը, ներկա պայմաններում նման համագործակցություն գոյություն չունի

6.2 ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Գործընկեր Կազմակերպությունը	Համագործակցության բնույթը	Ազդեցության կարևորությունը կազմակերպության համար	
		Կարևոր	Շատ
Հասարակական կազմակերպություններ			



ՀՔԱ Հայաստանի կոմիտե	Եղել և մնում է ռազմավարական գործընկերը: Մինչև 2005թ համագործակցել է Միջեկեղեցական Խաղաղության խորհրդի /IKV, Նիդեռլանդներ/ կողմից իրականացվող ծրագրերում:		
Փաստաբան- ների պալատ	Համագործակցությունն արտահայտվել է կազմակերպության ինստիտուցիոնալ զարգացման ու կադրերի վերապատրաստման ընթացքում: Կազմակերպության իրավաբանը 2006թ-ից հանդիսանում է Փաստաբանների պալատի անդամ:		
«Քաղաքացի ական հասարա- կության Ինստիտուտ»	ՀՔԱ Վանաձորի գրասենյակը համագործակցում է այս կազմակերպության հետ պենիտենցիալ համակարգում ձերբակալվածների և կալանավորվածների իրավունքների պաշտպանության ուղղությամբ: 2004թ-ից ՀՔԱ Վանաձորի գրասենյակը հանդիսանում է ՀՀ արդարադատության նախարարության հասարակական դիտորդական խմբի անդամ:		
Հայաստանի Հելսինկյան կոմիտե	Համագործակցությունը սկսվել է 2003թ-ից և առավել մեծ թափ ստացել 2005թ-ից համատեղ իրականացվող ծրագրերի իրականացման, ռեսուրսների վերապատրաստման մեջ:		
Թրանսփարեն սի Ինթերնեյշնլ /Հայաստանի մասնաճյուղ տարածաշր- ջանային զարգացման կենտրոն/	Համագործակցությունը ձևավորվել է 2006թ-ից ընտրական գործընթացներում կոռուպցիոն երևույթների բացահայտման ուղղությամբ:		
ABA Celli	Համագործակցությունը սկսվել է 2007թ-ից կադրերի պատրաստման, ընտրական գործընթացներում իրավական աջակցության տրամադրման ծրագրերում: Ներկայումս քննարկման գործընթացում է «Իրավական կլինիկայի» ձևավորման հարցը:		
Հայաստանի Հելսինկյան ընկերակ- ցություն	Համագործակցությունը, որն սկսվել է սկսվել է 1999թ- ից, հիմնականում արտահայտվում է կոնկրետ դեքերում համատեղ քայլերի իրականացմամբ՝ ուղղված մարդու իրավունքների պաշտպանությանը:		
Լրագրողական հասարակական կազմակերպություններ			
Երևանի մամուլի ակումբ	2003 թվականից այս կազմակերպության հետ ձևավորվել է ռազմավարական համագործակցություն: Երևանի մամուլի ակումբն էական ազդեցություն է		



	<p>ունենում Լոռու մարզում, մասնավորապես՝ Վանաձորում ազատ լրատվամիջոցների զարգացման և լրագրողների շահերի պաշտպանության գործում: Երևանի մամուլի ակումբի հետ համագործակցության շրջանակներում ՀՔԱ Վանաձորի գրասենյակը ներգրավվում է հանրապետական մակարդակում իրականացվող ծրագրերի մեջ: 2003թ-ի մայիսին հանրապետության նախագահի և ԱԺ-ի պատգամավորների ընտրությունների ժամանակ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի աշխատակիցներն էական մասնակցություն ունեցան Երևանի մամուլի ակումբի կողմից իրականացվող ՋԼՄ-ներով նախընտրական քարոզչության մոնիտորինգի ծրագրում/։ ՀՔԱ Վանաձորի գրասենյակը 2006-2010թթ ընթացքում նախատեսում է ներգրավել այդ կազմակերպության ռեսուրսները՝ իր կարողությունների զարգացման նպատակով:</p>		
<p>Հետաքննող լրագրողների ընկերակցություն /Հետք/</p>	<p>Հասարակական այս կազմակերպության հետ համագործակցությունն արտահայտվում է ինֆորմացիայի ստացման, տարածման շրջանակներում: Այս կազմակերպությունը զգալի ներդրում է ունենում կազմակերպության աշխատակիցների մասնագիտական կարողությունների զարգացման գործում:</p>	<p>■</p>	
<p>Ինֆորմացիայի ազատության կենտրոն</p>	<p>Այս կազմակերպությունը զգալի ազդեցություն ունեցավ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի վրա 2003թ-ից: Համագործակցությունն այս կազմակերպության հետ արտահայտվում է մոնիտորինգային ծրագրերի շրջանակներում: ՀՔԱ Վանաձորի գրասենյակը «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի կիրառման մոնիտորինգի իրականացնողն է Լոռու մարզում: Մոնիտորինգը շարունակվում է մինչ օրս 2006թ. ՀՔԱ Վանաձորի գրասենյակն արժանացավ Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կողմից սահմանված մրցանակին՝ որպես տեղեկատվության ազատության իրավունքը հանրապետությունում լավագույնս կիրառած կազմակերպություն:</p>		<p>■</p>
<p>Ինտերնյուս-Հայաստան</p>	<p>Այս կազմակերպությունը հանդիսանում է ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ռազմավարական գործընկերը: Համագործակցությունը դրսևորվում է ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ինստիտուցիոնալ զարգացման ծրագրի</p>		<p>■</p>



	<p>իրականացման /CBP/ ընթացքում: Այդ ծրագրով կազմակերպվող դասընթացները գրեթե ամբողջությամբ իրականացվում են «Ինտերնյուս» հասարակական կազմակերպության բարձրակարգ մասնագետների մասնակցությամբ:</p> <p>Հաճախակի «Ինտերնյուս» հասարակական կազմակերպության աջակցությամբ ՀԲԱ Վանաձորի գրասենյակը ներգրավվում է հանրապետական մակարդակի ծրագրերում: ՀԲԱ Վանաձորի գրասենյակը 2006-2010թթ ընթացքում նախատեսում է ներգրավել այդ կազմակերպության ռեսուրսները կարողությունների զարգացման նպատակով:</p>		
<p>Գյուլնրիի լրագրողների «Ասպարեզ» ակումբ</p>	<p>2005-2006թթ կազմակերպության գործունեության ծավալման ռազմավարական գործընկերն է Գյուլնրիի «Ասպարեզ» լրագրողների ակումբը:</p> <p>Համագործակցությունն արտահայտվել է տեղեկատվության ազատության իրավունքի, սահմանադրական փոփոխությունների, մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի վերաբերյալ հասարակական իրազեկման, տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մոնիտորինգի կապակցությամբ իրականացվող գործողություններում:</p> <p>Այս կազմակերպության հետ համագործակցությամբ իրականացվում են նաև քաղաքացիական մասնակցության դերի մեծացմանն ուղղված համատեղ ծրագրեր /մասնավորապես 2005թ. տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների և սահմանադրության հանրաքվեի ժամանակաշրջանում/:</p> <p>Համագործակցությունը կշարունակվի նաև ոչ մայրաքաղաքային լրագրողների և անկախ լրատվամիջոցների զարգացմանն ուղղված գործողությունների շրջանակներում:</p>		
Տեղական և հանրապետական զանգվածային լրատվության միջոցներ			
<p>Ալավերդու «Անկյուն +3»</p>	<p>Գրասենյակի գործունեության ընդլայնման և նրա գործունեության վերաբերյալ քաղաքացիական իրազեկման մակարդակի բարձրացման համար տեղական լրատվական միջոցներն ունեն առաջնային ազդեցություն:</p>		
<p>Ստեփանավանի «Ֆորտունա»</p>			
<p>Վանաձորի «Լոռի TV»</p>			



հեռուստա- ընկերություն- ները			
Վանաձորի «Միգ Հոլդինգ» հեռուստա- ընկերություն			■
«Լոռու մարզ» շաբաթաթերթ		■	
«Հայկական Ժամանակ» օրաթերթ			■
«Ժամանակ Երևան» օրաթերթ			■
«Առավոտ» օրաթերթ			■
Տարածաշրջանային հասարակական կազմակերպություններ			
ՀՔԱ Հարավային Կովկասի ցանց	Տարածաշրջանի հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության ձևավորման գործում էական ազդեցություն և առաջնային նշանակություն ունի:		■
ՀՔԱ Վրաստանի Ազգային կոմիտե SKIRS			■
ՀՔԱ Հայաստանի Ազգային կոմիտե			■
ՀՔԱ Ադրբեջանի Ազգային կոմիտե			■
ՀՔԱ Ղազախի գրասենյակ			■
ՀՔԱ Գյանջայի գրասենյակ			■
Հելսինկյան			■



Նախաձեռնություն 92			
«Ожидание» վրացական կազմակերպություն	Անհայտ կորածների և նրանց ընտանիքների խնդիրների լուծման ժամանակ իրականացվում է փորձի փոխանակում:		■
Կովկասի փախստականների միջազգային հասարակական կազմակերպություն /CRINGO/ ցանցը	2003թ-ից ՀԲԱ Վանաձորի գրասենյակն այս ցանցի ասոցացված անդամ է:		■
Միջազգային կազմակերպություններ			
Միջեկեղեցական խաղաղության խորհուրդ (IKV) PAX CRISTI	Տարածաշրջանային մակարդակով կազմակերպության գործունեության ընդլայնման և զարգացման վրա զգալի է ռազմավարական գործընկերությունը: 2001թ-ից Միջեկեղեցական խաղաղության խորհրդի մասնակցությամբ և աջակցությամբ իրականացվող տարածաշրջանային ծրագրերը մեծապես նպաստել են նաև կազմակերպության ինստիտուցիոնալ զարգացմանը: 2007թ-ից միանալով PAX CRISTI կազմակերպության հետ՝ մշակում է նոր ռազմավարություն, որի քննարկումներին մասնակցել և առաջարկություններ է ներկայացրել ՀԲԱ Վանաձորի գրասենյակը:		■
UNITED	ՀԲԱ Վանաձորի գրասենյակը 2005 թ-ից հանդիսանում է ռասիզմի, ֆաշիզմի, ազգայնականության, խտրականության դեմ UNITED եվրոպական ցանցի անդամ և մասնակցում է նրանց կոմից իրականացվող ակցիաներին: ՀԲԱ Վանաձորի գրասենյակը 2006-2010թթ ընթացքում նախատեսում է ներգրավել այդ կազմակերպության ռեսուրսները կարողությունների զարգացման նպատակով:	■	
Amnesty International /Միջազգային Ներում/	Այս կազմակերպությունների հետ համագործակցությունը պայմանավորվում է մարդու իրավունքների խախտման առանձին փաստերի վերաբերյալ միջազգային մակարդակում տեղեկատվության տարածմամբ: Այդ կազմակերպություններն աջակցում են նաև մարդու		■
Human Rights			■



Watch	իրավունքների պաշտպանության ուղղությամբ կազմակերպության կողմից իրականացվող գործողությունների իրականացման ընթացքում:		
Մարդու իրավունքների պաշտպանության Լեհական Հելսինկյան հիմնադրամ	2005-2006թթ Լեհական հիմնադրամի հետ ձևավորված համագործակցությունը հնարավորություն տվեց կազմակերպության երեք անդամի վերապատրաստվել Լեհաստանում: Վերապատրաստման այս ծրագիրը շարունակելի է: 2006թ. ապրիլին Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը Հայստանում իրականացրել է «Մարդու իրավունքների պաշտպանության հարավկովկասյան դպրոց», 2007թ-ի օգոստոսին «Մարդու իրավունքների մոնիտորինգ» դասընթացները, որտեղ որպես փորձագետներ ներգրավվել են Լեհական Հելսինկյան հիմնադրամի ներկայացուցիչները:		
Խոշտանգումների դեմ կոմիտե	Ձերբակալված և ազատազրկված անձանց իրավունքների պաշտպանության ուղղությամբ կազմակերպության իրավախորհրդատվական բաժնի աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով 2006-2010 թթ-ի ընթացքում ՀԲԱ Վանաձորի գրասենյակը նախատեսում է ներգրավել այս կազմակերպությանն իր փորձը կազմակերպության աշխատակիցներին փոխանցելու համար:		
Միջազգային Կարմիր խաչի Կոմիտե (ICRC)	Միջազգային կարմիր խաչի հետ համագործակցություն է սկսել ձևավորվել 2002թ-ից: Համագործակցությունն արտահայտվում է անհայտ կորածների հիմնախնդիրների շուրջ տեղեկատվության փոխանակման, այդ կապակցությամբ իրականացվող միջոցառումների շրջանակներում:		
UNOY PEACE-BUILDERS	2007թ-ից խաղաղասիրության բնագավառում կազմակերպությունն այս ցանցի անդամ է, միևնույն ժամանակ կազմակերպության անդամներից մեկը հանդիսանում է ցանցի միջազգային ղեկավար խմբի անդամ:		
ԵԱՀԿ Երևանյան գրասենյակ	ՀԲԱ Վանաձորի գրասենյակն համագործակցում է ԵԱՀԿ Երևանի գրասենյակի հետ, որը նախատեսվում է շարունակել նաև մինչև 2010թ:		
New Tactics in Human Rights	2004թ-ին ՀԲԱ Վանաձորի գրասենյակի համակարգողն Անկարայում մասնակցություն ունեցավ New Tactics in Human Rights ծրագրի շրջանակներում կազմակերպված սիմպոզիումին: New Tactics in Human		



	Rights կազմակերպության հետ ձևավորվել է համագործակցություն: Այս համագործակցությունը խոշտանգումներից տուժածների և մարդու իրավունքների պաշտպանության նոր մեխանիզմների ներդրման հնարավորություն է ընձեռում:		
«Женщины Дона»	2006թ-ից կազմակերպությունը խաղաղասիրական գործունեության ոլորտում աջակցում է կադրերի վերապատրաստմանը:	■	
OWN գերմանական կազմակերպություն	2006թ-ից կազմակերպությունը խաղաղասիրական գործունեության ոլորտում աջակցում է կադրերի վերապատրաստմանը:	■	
Դոնորներ			
«Եվրասիա»	Այս կազմակերպությունների հետ համագործակցությունը ձևավորվել և դրսևորվում է կազմակերպության կողմից իրականացվող ծրագրերում ֆինանսական ռեսուրսների ներդրմամբ:		■
Counterpart International	Այս կազմակերպության կողմից իրականացվող ծրագրերում ֆինանսական ռեսուրսների ներդրմամբ:		■
Բաց հասարակության ինստիտուտ /SOROS հիմնադրամ/	2006թ. մարտից-հոկտեմբեր ամիսներին այս կազմակերպության աջակցությամբ իրականացվել է շահերի պաշպանության ծրագիր, այնուհետև 2006թ. նոյեմբերից հիմնադրամն աջակցում է կազմակերպության իրավապաշտպանական կարողությունների զարգացման եռամյա ծրագրի իրականացմանը:		■
1. ICCO Համագործակցության զարգացման միջեկեղեցական կազմակերպություն, Նիդերլանդներ	Այս կազմակերպությունը առաջնային ազդեցություն ունի գրասենյակի գործունեության վրա: Ծիշտ է մինչ այժմ ICCO –ի հետ համագործակցությունը եղել է միջնորդավորված Միջեկեղեցական Խաղաղության Խորհրդի միջոցով, սակայն թե՛ ինստիտուցիոնալ զարգացման, թե՛ ռազմավարական գործունեության իրականացումն անհնար կլիներ առանց ICCO –ի ֆինանսական աջակցության: Ներկա ռազմավարության մշակման և իրականացման վրա նույնպես էական նշանակություն կունենա ICCO –ն: 2007-2010թթ-ի նոր ռազմավարության մշակման ժամանակ մասնակցել է նաև ՀՔԱ Վանաձորի գրասենյակը, ներկայացրել իր առաջարկությունները: Միաժամանակ կազմակերպությունը մշակել և ներկայացրել է «Զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողություն» ծրագիրը:		■
Այլ կառույցներ			
Տեղական	Վերջին երեք տարիներին Հայաստանի Հյուսիսային	■	



<p>ինքնակառավարման մարմիններ և տարածքային կառավարման մարմիններ:</p>	<p>շրջաններում ՀՔԱ Վանաձորի գրասենյակի գործունեության ընդլայնմանը զուգընթաց կազմակերպության կողմից իրականացվող ծրագրերում մեծացել է տեղական ինքնակառավարման մարմինների և տարածքային կառավարման մարմինների դերը: Խաղաղասիրական գործունեության և մերձսահմանային համագործակցության ձևավորման մեջ, կազմակերպության կողմից իրականացվող տարածաշրջանային ծրագրերում «Փոխադարձ վստահության կառուցում», «Խաչվող սահմաններ», տեղական ինքնակառավարման մարմինները, տարածքային կառավարման մարմինները, մասնավորապես՝ Տավուշի, Լոռու, Շիրակի մարզպետարանները հանդես են գալիս որպես գործընկերներ: Վանաձորի քաղաքապետարանի հետ առկա է որոշակի հակասություն: Սա կապված է ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից պահանջած 2002-2003թթ համայնքի ղեկավարի և ավագանու որոշումների պատճենների տրամադրման հետ: Այդ պատճառով համագործակցությունը դրսևորվում է առանձին աշխատակիցների հետ ունեցած շփումներով:</p>		
<p>ՀՀ կառավարություն</p>	<p>2006-2007թթ-ի ընթացքում որոշակի համագործակցություն է ձևավորվել, մասնավորապես՝ անհայտ կորածների խնդիրների շուրջ: Կազմակերպությունն անհայտ կորածների, ռազմագերիների, նրանց ընտանիքների խնդիրների լուծման նպատակով աշխատանքներ է սկսել ՀՀ պաշտպանության նախարարության և ՀՀ Ռազմագերիների, անհայտ կորածների և պատանդների պետական հանձնաժողովի հետ: ՀՀ օրենսդրությամբ ԱԺ-ին օրենքների նախագծեր ներկայացնելու նախաձեռնությունը հիմնականում պատկանում է կառավարությանը: Սա է պատճառը, որ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից մշակված «Անհայտ կորածների տեղեկատվական բյուրոյի մասին» օրենքի նախագիծն ԱԺ ներկայացնելիս զգալի կլինի և որոշիչ նշանակություն կունենա ՀՀ Պաշտպանության նախարարությունը:</p>	<p>■</p>	
<p>ՀՀ Արդարադատության</p>	<p>ՀՔԱ Վանաձորի գրասենյակը հանդիսանում է ՀՀ արդարադատության նախարարության հասարակական դիտորդների խմբի անդամ: Պենիտենցիալ</p>	<p>■</p>	



<p>նախարարություն</p>	<p>համակարգում ազատագրկվածների իրավունքների պաշտպանության ուղղությամբ կազմակերպության գործունեության վրա էական ազդեցություն է թողնում ՀՀ արդարադատության նախարարությունը, հատկապես՝ քրեակատարողական ծառայության վարչությունը: ՀՀ գործող օրենսդրությունը կարգավորում է հասարակական դիտորդների և քրեակատարողական հիմնարկների հարաբերությունները, սակայն ազատագրկված քաղաքացիների իրավունքների պաշտպանության բնագավառում դիտորդական խմբի դերը դեռևս մնում է սահմանափակ:</p>		
-----------------------	--	--	--

7. ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՀԶԱ Վանաձորի գրասենյակի գործունեության ռազմավարական նպատակներն են.

- նպաստել օրենսդրության և նրա կիրառման մակարդակի բարելավմանը
- ներդնել խախտված իրավունքների վերականգնման արդյունավետ մեխանիզմներ
- նպաստել Ղարաբաղյան կոնֆլիկտի խաղաղ կարգավորմանը
- կոնֆլիկտներից տուժածների շահերի պաշտպանություն
- նպաստել քաղաքացիական վերահսկողության ձևավորմանը զինված ուժերի նկատմամբ
- նպաստել կոնֆլիկտների մեջ ներգրավված կողմերի մոտ միմյանց նկատմամբ հանդուրժողության մթնոլորտի ձևավորմանը
- տեղական, մարզային և հանրապետական մակարդակներում բարձրացնել քաղաքացիների դերն որոշումների կայացման մեջ
- նպաստել կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը տեղական և հանրապետական մակարդակներում:

Կազմակերպության ռազմավարական նպատակներից բխում են հետևալ օպերատիվ նպատակները:

իրավապաշտպանական գործունեության ոլորտում.



Ռազմավարական նպատակ 1

Օրենսդրության և նրա կիրառման բարելավում

Օպերատիվ նպատակներ

- 1.1. Նպաստել ազգային օրենսդրության և նրա կիրառման համապատասխանեցմանը մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության Եվրոպական Կոնվենցիայի սկզբունքներին
- 1.2. Նպաստել ազատագրված անձանց իրավունքների վերաբերյալ ազգային օրենսդրության և դրա կիրառման համապատասխանեցմանը մարդու իրավունքների Եվրոպական չափանիշներին:
- 1.3. Նպաստել անհայտ կորածների և նրանց ընտանիքների խնդիրները կարգավորող օրենքի ընդունմանը
- 1.4. Աջակցել «Այլընտրանքային զինծառայության մասին» ՀՀ օրենքի կիրառմանը

Ռազմավարական նպատակ 2

Խախտված իրավունքների վերականգնման արդյունավետ մեխանիզմների ներդրում

Օպերատիվ նպատակներ

- 2.1. Աջակցել մարդու իրավունքների խախտման արագ արձագանքման մեխանիզմների ներդրմանը Հայաստանի հյուսիսային շրջաններում
- 2.2. Աջակցել մարդու իրավունքների մոնիտորինգի համակարգի ձևավորմանն ու ներդրմանը սոցիալապես խոցելի խմբերի ներկայացուցիչների իրավունքների պաշտպանության նպատակով
- 2.3. Աջակցել Հայաստանի հյուսիսային շրջաններում մարդու իրավունքների վիճակի վերաբերյալ հասարակական իրազեկման մակարդակի բարձրացմանը
- 2.4. Նպաստել անվճար իրավական աջակցության համակարգի զարգացմանը:
- 2.5. Նպաստել հասարակական վերահսկողության ձևավորմանը դատական իշխանության գործունեության նկատմամբ
- 2.6. Նպաստել քաղաքացիական վերահսկողության ձևավորմանը՝ մարդու իրավունքների խախտման փաստերի վերաբերյալ քաղաքացիների կողմից իշխանության մարմիններին հասցեագրված դիմումների, հայտարարությունների, բողոքների կապակցությամբ ուսումնասիրությունների իրականացման նկատմամբ
- 2.7. Աջակցել վարչական դատարանների կայացմանը
- 2.8. Նպաստել մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում



համագործակցության ձևավորմանը Հարավային Կովկասում

Խաղաղասիրական գործունեություն ոլորտում

Ռազմավարական նպատակ 1

Նպաստել կոնֆլիկտների խաղաղ կարգավորմանը Հարավային Կովկասում

Օպերատիվ նպատակներ

- 1.1. Աջակցել կոնֆլիկտի խաղաղ կարգավորման գործընթացում քաղաքացիական պոտենցիալի հզորացմանը
- 1.2. Աջակցել հայ-ադրբեջանական երկկողմ հանդիպումների շրջանակի և գործունեության մեջ ընդգրկված կազմի ընդլայնմանը /կոնֆլիկտից տուժածներ՝ անհայտ կորածների հարազատներ, նախկին ռազմագերիներ, փախստականներ և նրանց հարազատներ/
- 1.3. Աջակցել փոխվստահության մթնոլորտի ձևավորմանը Հարավային Կովկասում
- 1.4. Նպաստել Հայաստանում ադրբեջանական գերեզմանատների նկատմամբ մարդասիրական վերաբերմունքի ձևավորմանը
- 1.5. Աջակցել հայ-վրացական սահմանամերձ բնակավայրերի միջև համագործակցության զարգացմանը
- 1.6. Նպաստել երիտասարդության ակտիվ մասնակցությանը խաղաղասիրական գործընթացներում

Ռազմավարական նպատակ 2

Կոնֆլիկտից տուժածների շահերի պաշտպանություն

Օպերատիվ նպատակ

- 2.1. Համագործակցելով կոնֆլիկտի մեջ ներգրավված երկրների քաղաքացիական հասարակության խմբերի ու հասարակական կազմակերպությունների հետ, աջակցել և իրականացնել լոբբինգ միջազգային կառույցներում՝ ուղղված կոնֆլիկտից տուժածների շահերի պաշտպանությանը

Ռազմավարական նպատակ 3

Նպաստել քաղաքացիական վերահսկողության ձևավորմանը զինված ուժերի նկատմամբ

Օպերատիվ նպատակներ

- 3.1. Աջակցել զորակոչի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության



համակարգի ձևավորմանը

- 3.2. Աջակցել ռազմական ծախսերի թափանցիկության ապահովմանը
- 3.3. Նպաստել քաղաքացիական վերահսկողություն իրականացնողների կարողությունների զարգացմանը

Ռազմավարական նպատակ 4

Նպաստել կոնֆլիկտների մեջ ներգրավված կողմերի մոտ միմյանց նկատմամբ հանդուրժողության մթնոլորտի ձևավորմանը

Օպերատիվ նպատակ

- 4.1 Աջակցել կրոնական և էթնիկական փոքրամասնությունների ներգրավմանը հասարակական գործընթացներում
- 4.2. Նպաստել հասարակական իրազեկման մակարդակի բարձրացմանը կրոնական, ազգային փոքրամասնությունների վերաբերյալ
- 4.3. Նպաստել երիտասարդության ակտիվ մասնակցությանը խաղաղասիրական գործընթացներում

Քաղաքացիական նախաձեռնությունների խթանման և աջակցության ոլորտում

Ռազմավարական նպատակ 1

Բարձրացնել քաղաքացիների դերն որոշումների կայացման գործում տեղական, մարզային և հանրապետական մակարդակներում

Օպերատիվ նպատակներ

- 1.1. Նպաստել քաղաքացիների մասնակցության դերի բարձրացմանն ընտրական գործընթացներում
- 1.2. Աջակցել սոցիալապես խոցելի խմբերի մասնակցությանն իրենց շահերի պաշտպանության գործընթացում
- 1.3. Նպաստել «Տեղական հանրաքվեի մասին» օրենքի կիրառմանը:
- 1.4. Աջակցել ՀՀ-ում ընտրական գործընթացներում դիտորդական ինստիտուտի զարգացմանը
- 1.5. Աջակցել ԱԺ պատգամավորների և Վանաձորի ավագանու թեկնածուների ծրագրերի և ընտրվածների գործունեության մասին հասարակության իրազեկվածության բարձրացմանը

Ռազմավարական նպատակ 2

Նպաստել կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը տեղական և հանրապետական մակարդակներում

Օպերատիվ նպատակ



- 2.1. Նպաստել քաղաքացիների դերի բարձրացմանը կոռուպցիայի կանխարգելման գործում
- 2.2. Նպաստել հասարակական վերահսկողության իրականացմանը համայնքի բյուջեի կատարման նկատմամբ
- 2.3. Աջակցել հասարակական իրազեկման մակարդակի բարձրացմանը «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի վերաբերյալ

Վերը նշված ռազմավարական նպատակներին հասնելու համար կազմակերպությունը, որպես միջոց, իր առջև դնում է նաև հետևյալ նպատակները.

- 1.1. Իրականացնել կազմակերպական կարողությունների շարունակական զարգացում
- 1.2. Իրականացնել կազմակերպության կառուցվածքի շարունակական բարելավում
- 1.3. Անընդհատ զարգացնել կազմակերպության անդամների կարողություններն ու հմտությունները
- 1.4. Բարելավել կազմակերպության աշխատանքային պայմանները /տարածքի ընդլայնում, նյութատեխնիկական և տրանսպորտային միջոցների նորացում/

Այս նպատակներին կազմակերպությունը հասնելու է հետևյալ խնդիրների լուծման միջոցով.

- մարդու իրավունքների մոնիթորինգային գործիքների մշակում և նրա իրականացում փակ և կիսափակ հաստատություններում
- մարդու իրավունքների վիճակի վերաբերյալ տարեկան զեկույցների պատրաստում և հրապարակում
- մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված իրավական, հասարակական մեխանիզմների ձևավորում և իրականացում
- մարդու իրավունքների պաշտպանության մոնիթորինգի մեթոդների ուսուցման Հարավկովկասյան դպրոցի կազմակերպում տարածաշրջանի երիտասարդների համար
- մարդու իրավունքների մոնիթորինգի իրականացում կոնֆլիկտային տարածքներում, զեկույցի պատրաստում և իրազեկում միջազգային կառույցներին
- դիտորդական խմբերի ձևավորում, ուսուցում և դիտորդական առաքելության իրականացում ընտրական պրոցեսների ժամանակ
- Հայաստանի հյուսիսային շրջաններում սոցիալապես խոցելի խմբերի տվյալների բազայի ձևավորում
- մոնիթորինգային խմբերի ձևավորում, ուսուցում և նրանց միջոցով մոնիթորինգի իրականացում արդար դատաքննության իրավունքի պաշտպանությանն ուղղությամբ



- խոցելի խմբերի հայտնաբերում և նրանց միջև հասարակական երկխոսության կայացում
- խոցելի խմբերի շահերի պաշտպանության ուղղությամբ օրենսդրական առաջարկությունների մշակում
- տեղական և ազգային մակարդակներում մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված օրենսդրական առաջարկությունների մշակում
- անհայտ կորածների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանությանը վերաբերող օրենսդրական մեխանիզմների մշակում և կատարելագործում
- հակամարտության մեջ գտնվող հասարակությունների ներկայացուցիչների /երիտասարդներ, լրագրողներ, հկ-ներ/ մասնակցությամբ խաղաղասիրական ծրագրերի մշակում և իրականացում
- միջմշակութային հանդիպումների կազմակերպում
- քաղաքացիական նախաձեռնող խմբերի ձևավորում, ուսուցում ինքնակառավարման մարմինների որշումների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու համար
- զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության խմբի ձևավորում, ուսուցում և գործունեության ծրագրի մշակում
- կրոնական և էթնիկական փոքրամասնությունների ներկայացուցիչների ուսուցում ՄԻ պաշտպանության մեխանիզմներին
- տեղական հանրաքվեի ինստիտուտի ներդրում և իրականացում:

8. ԻՐԱՎԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ ԵՎ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ

Կազմակերպության գործունեության պլանավորումն իրականացվում է ըստ ռազմավարական ուղղությունների:

Կազմակերպության ռազմավարական խնդիրների լուծման նպատակով կազմակերպության բաժիններն առաջարկություններ են ներկայացնում բաժնի տարեկան աշխատանքների վերաբերյալ, որը ներառում է.

- իրականացման հաճախականությունը և ժամկետները
- գործունեության իրականացման պատասխանատուներին
- գործողությունների իրականացման համար օգտագործվող ռեսուրսները
- արդյունավետության ցուցանիշները:

Գործունեության վերահսկման նպատակով նախատեսվում է ստեղծել ծրագրավորված գործողությունների վերաբերյալ հաշվետվության միասնական համակարգ: Յուրաքանչյուր բաժնի համակարգող ներկայացնում է կատարված աշխատանքների հաշվետվությունը յուրաքանչյուր տարվա վերջում:




Գործունեության մոնիտորինգն իրականացվում է աշխատակազմի մասնակցությամբ յուրաքանչյուր տարի: Սա իր մեջ ներառում է իրականացված աշխատանքների և աշխատանքային պլանի համեմատությունը, վերլուծությունը, գնահատումը՝ ըստ արդյունավետության ցուցանիշների, համապատասխան առաջարկությունների ներկայացումն ըստ նախապես հաստատված պլանի:

Ռեսուրսներ

Կազմակերպության ռազմավարական խնդիրների իրականացման համար ՀՔԱ Վանաձորի գրասենյակն ունի, առաջիկայում էլ ակնկալում է օգտագործել և ձեռք բերել հետևյալ ռեսուրսները:

- **Մարդկային ռեսուրսներ**

Կազմակերպության հիմնական աշխատակազմը բաղկացած է 17-45 տարեկան 7 փորձառու անհատներից, որոնք տիրապետում են մարդկային ռեսուրսների կառավարման, գրանտային ծրագրերի մշակման և իրականացման, լրագրողական, իրավաբանական գիտելիքների ու հմտությունների:





Կազմակերպության ընթացիկ աշխատանքների իրականացումն ապահովում է 14 կամավորների ընդգրկմամբ: Կամավորների, մարդկային ռեսուրսների կայունության վրա բացասական ազդեցություն ունեն ծանր սոցիալ-տնտեսական պայմանները, գործազրկության բարձր մակարդակը, կենսամիջոցների հայթայթման դժվարությունը: Նման պայմաններում կամավորներ կարող են ընդգրկվել քիչ թե շատ ֆինանսապես և նյութապես ապահովված ընտանիքներից, որոնց թիվը բավականին քիչ է: Այս ամենի պատճառով կամավորների կազմն անընդհատ ենթարկվում է փոփոխության: Ռազմավարական խնդիրների լուծման ընթացքում կազմակերպությունը կարիք ունի զարգացնել աշխատակազմի կառավարման, մոնիտորինգի անցկացման և գնահատման, պլանավորման, օտար լեզուների վերապատրաստման դասընթացներ: Միևնույն ժամանակ վերապատրաստման դասընթացներ են ակնկալվում կամավորների համար: Կարևոր խնդիր է հանդիսանում նաև կազմակերպության ռազմավարական նպատակների, դերի նկատմամբ անդամների մոտիվացիաների պահպանումը, որը կարող է փոփոխման ենթարկվել բազմաթիվ սուբյեկտիվ և օբյեկտիվ պատճառներով:

Կազմակերպության ռազմավարության իրականացման համար կմշակվի և կներդրվի գործունեության մեջ կամավորների և շահառուների ներգրավման կանոնակարգեր:

- **Նյութական ռեսուրսներ**

Կազմակերպությունը գործում է ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 59 հասցեում տեղակայված 68 մ² տարածք զբաղեցնող գրասենյակում, որն օգտագործում է անվճար հիմունքներով: Կազմակերպությունն ունի նաև սեփական գույք: Ռազմավարական ծրագրի իրագործման և կազմակերպության զարգացման ընթացքում անհրաժեշտություն կառաջանա ընդլայնել կազմակերպության տարածքը, ավելացնել գույքը, տեխնիկական հնարավորությունները: Կազմակերպության նյութական ռեսուրսների տնօրինումն ու գույքի օգտագործումն իրականացվում է աշխատակազմի մշակած ձեռնարկի և կանոնակարգի համապատասխան: Ինչպես նաև, յուրաքանչյուր ծրագրի մեկնարկին և ավարտին իրականացվում են գույքագրման աշխատանքներ:

- **Ինֆորմացիոն ռեսուրսներ**

Կազմակերպության համար կարևոր ինֆորմացիոն ռեսուրս են հանդիսանում գրադարանը և ֆիլմադարանը: Ներկայումս ստեղծված է էլեկտրոնային թեմատիկ բազա, որը գրականության ֆոնդի ավելացման հետ կարիք ունի հարստացման: Նախատեսվում է ընդլայնել նաև գրականության



ցանկը: Կազմակերպությունն ունի նաև ինտերնետային էջ, որտեղ պարբերաբար տեղակայվում են կազմակերպության գործունեությանն առնչվող նորությունները: Նախատեսվում է կատարելագործել ինտերնետային էջը՝ հնարավորությունների ընդլայնման նպատակով:

• **Ֆինանսական ռեսուրսներ**

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ՀԿ-ներին արգելվում է տնտեսական գործունեությամբ զբաղվել, այսինքն՝ կազմակերպությունը չի կարող վճարովի ծառայություններ մատուցել՝ ինքնուրույն ձևավորել բյուջե, կազմակերպության գործունեության ապահովման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների ներգրավման հիմնական աղբյուր են հանդիսանում միջազգային դոնոր կազմակերպությունները, որոնք գործում են ՀՀ-ում և նրա սահմաններից դուրս: Ֆինանսական ռեսուրսների տեղական աղբյուրները՝ բիզնես, քաղաքացիների նվիրատվություններ, հատկացումներ տեղական և պետական բյուջեներից, դեռևս մնում են ոչ կիրառելի: Դա պայմանավորված է մի շարք գործոններով:

Ֆինանսական ռեսուրսների ներգրավման միակ իրական աղբյուրը քաղաքացիների նվիրատվությունն է, որի ուղղությամբ կազմակերպությունը նախատեսում է իրականացնել ֆոնդահայթայթման աշխատանքներ: Վերջինիս ծավալը սահմանափակ է քաղաքացիների ֆինանսական կարողությունների սղության պատճառով, և նրանց ներդրումը մեծ լինել չի կարող:

Կազմակերպության գործունեության ֆինանսական ռեսուրսների գերակշիռ մասը ներկայումս ապահովվում է Բաց հասարակության Ինստիտուտի օժանդակության և Նիդերլանդների կառավարության կողմից համատեղ ֆնանսավորմամբ իրականացվող ծրագրի շրջանակներում, որը շարունակվելու է մինչև 2010թ: ICCO կազմակերպությանը ներկայացվել է ծրագիր, որի ֆինանսավորումը գտնվում է քննարկման ընթացքում: Առանձին գործողությունների և ծրագրերի ֆինանսավորում է ակնկալվում Եվրասիա հիմնադամի, Վրաստանում Հոլանդիայի դեսպանատան, Բրիտանական Խորհրդի, IKV PaxChristi, ABA CELLI, UNDPPI կազմակերպություններից:

Կազմակերպության գործունեության ֆինանսական շարունակելիության և անընդհատության համար, ըստ ռազմավարական ուղղությունների, մշակվում են համապատասխան ծրագրեր, որոնք կներկայացվեն Հայաստանի սահմաններից դուրս գործող հիմնադրամներին:

Առաջիկա երեք տարիների ընթացքում ֆինանսական ռեսուրսների ապահովման տեսակետից կարևոր նշանակություն կունենա ընթացիկ ծախսերի պլանավորման և վերահսկման մեխանիզմների ներգրավումը:

• **Համագործակցություն**



ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ռազմավարական խնդիրների իրագործման համար կարևոր երաշխիք է համագործակցությունը տարբեր կառույցների հետ:

Կազմակերպության ռազմավարական ուղղությունների զարգացման համար համագործակցություն է ձևավորվել համապատասխան կառույցների հետ և աշխատանքներ են տարվում ձևավորված համագործակցությունն ընդլայնելու ուղղությամբ: Կազմակերպության ռազմավարական ուղղությունների զարգացման գործում ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ռազմավարական գործընկեր է համարվում Միջեկեղեցական Խաղաղության Խորհուրդը /IKV, Նիդերլանդներ/ (2007թ-ից այն միաձուլվեց PAX CHRISTI-ի հետ): Այդ համագործակցության շնորհիվ համագործակցություն է ձևավորվել նաև հոլանդական ICCO կազմակերպության հետ:

Մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում կազմակերպությունը համագործակցում է ոչ միայն տեղական ու հանրապետական, այլև տարածաշրջանային ու միջազգային կազմակերպությունների հետ:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը մտադիր է շարունակել համագործակցությունը Մարդու իրավունքների պաշտպանության Լեհական Հելսինկյան հիմնադրամի հետ, որը կնպաստի մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում կազմակերպության աշխատակիցների վերապատրաստմանը, իրավապաշտպանության գործունեության արդյունավետության բարձրացմանը:

Միջազգային իրավապաշտպան կազմակերպությունների հետ ունեցած համագործակցությունը, որոնցից կարելի է առանձնացնել «Միջազգային ներում», HRW կազմակերպություններին, նպաստում է իրավապաշտպանության ոլորտում կազմակերպության դերի ու ազդեցության մեծացմանը, մարդու իրավունքների պաշտպանության որակական մակարդակի բարձրացմանն ու այս ուղղությամբ կատարվող աշխատանքների ծավալների ընդլայնմանը:

Կազմակերպության համար կարևորագույն խնդիր է ընդլայնել ու զարգացնել համագործակցության շրջանակը Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հետ:

Խաղաղասիրության ու կոնֆլիկտների խաղաղ կարգավորման բնագավառում ՀՔԱ Վանաձորի գրասենյակի համար կարևոր է ՀՔԱ Հարավային Կովկասի ցանցում ընդգրկված կազմակերպությունների հետ համագործակցությունը: Տարածաշրջանում կոնֆլիկտների խաղաղ կարգավորման նպատակով հանրապետության ներսում գործունեության իրականացմանը ՀՔԱ Վանաձորի գրասենյակին մեծապես աջակցում են Հայաստանի Հելսինկյան Կոմիտեն, «Քաղաքացիական Հասարակության ինստիտուտը»:

Համագործակցության մեջ առանձին տեղ է զբաղեցնում կազմակերպության խորհրդի գործունեությունը: Այս պատճառով էլ նախատեսվում է վերանայել կազմակերպության խորհրդի կազմը`



գործընկերներին ներգրավելու և կազմակերպության կառուցվածքային զարգացումն ապահովելու նպատակով: Խորհրդի կազմի ընդլայնման համար հինք է ընդունվելու Խորհրդի դերի ուժեղացմամբ կառուցվածքային հզորացումն ապահովելու սկզբունքը: